ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

ԳԼՈԲԱԼ ՀԶՈՐԱՑՈՒՄ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ 2019

ՀԱՅԱՍՏԱՆ

Օգոստոս 2020

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ 2019

ՀԱՅԱՍՏԱՆ

Օգոստոս 2020

Մշակված է՝
ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
Ժողովրդավարության, կոնֆլիկտի և մարդասիրական աջակցության բյուրո
Ժողովրդավարության, մարդու իրավունքների և կառավարման գերազանցության կենտրոն

Այս հրապարակումը հնարավոր եղավ Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) կողմից տրամադրված աջակցության միջոցով `AID-OAA-LA-17-00003 համաձայնագրային համաձայնագրով:

Ծանուցում. Սույն փաստաթղթում արտահայտված կարծիքները պանելիստների և ծրագրի այլ հետազոտողների կարծիքներն են և անպայման չեն արտացոլում USAID- ի կամ
FHI 360- ի տեսակետները:

Գործընկեր՝
Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ
Գագիկ Վարդանյան
Սոնյա Մսրյան

Նախագծի ղեկավարներ՝
FHI 360
Միքայել Կոտտ
Եկա Իմերլիշվիլի
Ալեքս Նեջադյան

INTERNATIONAL CENTER FOR NOT-FOR-PROFIT LAW (ICNL)
Կատարին Շեա
Ջեննիֆեր Ստյուարտ

Խմբագրակամ կոմիտե՝
Էրիկ ՄքՔարտհի, Աստա Զինբո, Միքաել Կոտտ, Ջենիֆեր Ստյուարտ և Նատալիա Շարապովա

Շապիկի լուսանկար՝ Խոր Վիրապ, որտեղ քրիստոնեություն քարոզող Գրիգոր Լուսավորիչը բանտարկվել է 14 տարի, հետո ազատվել է Տրդատ թագավորի կողմից, ով նաև հաստատել է քրիստոնեությունը որպես պետական կրոն, առաջինն աշխարհում: Վանքը հիմնադրվել է Խոր Վիրապի տեղում՝ 7-րդ դարում:

Մայրաքաղաք: Երևան
Բնակչություն: 3,038,217
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (PPP): $9,500
Մարդկային զարգացման ինդեքս: Բարձր (0.755)
Ազատության աստիճանը: Մասնակի ազատ (45/100)

ՔՀԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ: 3.6



2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո իշխանության եկած հայաստանյան նոր կառավարությունը և քաղաքական ղեկավարությունը հայտարարեցին, որ հեղափոխությունից հետո ՔՀԿ-ների համար ստեղծվելու է առավել աջակցող միջավայր՝ հատկորոշվելով պետության և ՔՀԿ սեկտորի միջև առավել լայն համագործակցությամբ: Միևնույն ժամանակ նախկին ռեժիմի աջակիցներն իրականացրեցին մեդիա արշավներ՝ թիրախավորելով և՛ նոր կառավարությանը, և՛ ՔՀԿ հատվածը: Մասնավորապես թիրախավորվեցին մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության ոլորտներում գործող ՔՀԿ-ները: Այս ամենի արդյունքում վիրտուալ տարածությունը և մեդիա դաշտը դարձան առավել բևեռացված և լի ապատեղեկատվությամբ:

2019 թվականին նոր կառավարությունը ներկայացրեց միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, ինչպես նաև սկսեց բարեփոխումներ իրականացնել արդարադատության, հարկային և սոցիալական ոլորտներում: Նախկին կառավարության և իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ սկսեցին իրականացվել հետաքննական և դատական գործընթացներ, մի մասի դեպքում՝ ուղղված կոռուպցիոն դեպքերի բացահայտմանը: Առավել նշանակալի էր 2019 թվականի սեպտեմբերին նախաձեռնված ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ձերբակալությունը՝ 2008 թվականին տեղի ունեցած բողոքի ցույցերի՝ բռնության գործադրմամբ զսպման գործընթացում ունեցած իր դերակատարության համար, որի ընթացքում զոհվեց ութ քաղաքացիական և երկու ոստիկան: Միևնույն ժամանակ ներկա իշխանությունները դատական համակարգը հռչակեցին նախկին իշխանություններից մնացած «վերջին բաստիոն» և հայտարարեցին, որ որոշակի քայլեր կձեռնարկեն արմատացած և կոռումպացված դատավորներին հեռացնելու ուղղությամբ: Այս ջանքերն ի վերջո փոխարինվեցին արդարադատության ոլորտում որոշակի աստիճանական բարեփոխումներով, այդ թվում նոր մշտադիտարկում իրականացնող հանձնաժողովների ստեղծումը և դատավորների ընտրության գործընթացների բարելավումը:

Թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանը բարելավել է իր դիրքն ըստ «Լրագրողներ առանց սահմանների» մամուլի ազատության համաթվի: 2019 թվականի ընթացքում, այնուամենայնիվ, առկա էին մամուլի ազատության վրա ազդեցության որոշակի մտահոգիչ միտումներ, այդ թվում լրատվամիջոցների վրա ճնշումների ավելացումը և տեղեկատվության ստացման և փոխանցման իրավունքների ոտնահարումները:

ՔՀԿ ոլորտի ընդհանուր կայունությունը 2019 թվականի ընթացքում նշանակալի փոփոխությունների չի ենթարկվել, թեև որոշակի բարելավումներ նկատվել են կազմակերպական կարողությունների և շահերի պաշտպամության ոլորտներում: Վերջին մի քանի տարիների ընթացքում դոնորների կողմից ֆինանսավորվող մի շարք ծրագրեր ուղղված են եղել ՔՀԿ ոլորտի կարողությունների զարգացմանը, այդ թվում առաքելությունների, կազմակերպական

կառուցվածքների, քաղաքականությունների և ընթացակարգերի, թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների կառավարման զարգացմանը: ՔՀԿ շահերի պաշտպանությունը բարելավվել է շնորհիվ ՔՀԿ կոալիցիաների՝ հանրային քաղաքականությունների մշակման վրա ազդեցության մեծացման:

Համաձայն Արդարադատության նախարարության (ԱՆ) Պետական ռեգիստրի գործակալության 2019 թվականի վերջի դրությամբ Հայաստանում գրանցված է եղել 4,794 հասարակական կազմակերպություն (2018 թվականին այս թիվը կազմել է 4,222), 1,212 հիմնադրամ (1,120 հիմնադրամ՝ 2018 թվականին) և 228 իրավաբանական անձանց միություն (244 իրավաբանական անձանց միություն՝ 2018 թվականին): 2017 թվականին տեղի ունեցած իրավական փոփոխություններից հետո իրավական անձանց միությունները որպես կազակերպաիրավական ձև այլևս գոյություն ունենալ չէին կարող: Գործող իրավական անձանց միությունները պետք է փոփոխեին իրենց կանոնադրությունները և մինչև 2019 թվականի փետրվար ամիսը վերագրանցվեին կա՛մ որպես հիմնադրամներ, կա՛մ որպես հասարակական կազմակերպություններ: Մինչ տարվա վերջ պետական ռեգիստրում գրանցված 228 իրավական անձանց միությունները ո՛չ կամավոր լուծարվել են, ո՛չ էլ վերագրանցվել են մինչ սահմանված վերջնաժամկետը: Մի կողմից օրենքը սահմանում է, որ այս կազմակերպությունները պետք է լուծարվեն, սակայն մյուս կողմից ոչ մի ենթաօրենսդրական ակտ չի ընդունվել այս գործընթացի իրականացման համար, ինչի արդյունքում այս կազմակերպությունները դեռևս մնում են գրանցված ռեգիստրում, սակայն չեն կարող գործել իրավական հարթությունում:

ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ: 3.6

2019 թվականին ՔՀԿ ոլորտը կարգավորող իրավական միջավայրը նշանակալի փոփոխությունների չի ենթարկվել:



ՔՀԿ-ների գրանցման իրավական գործընթացները և կարգավորումները հիմնականում բարենպաստ են: Հայաստանում կարող են գրանցվել երկու տեսակի ՔՀԿ-ներ՝ անդամության վրա հիմնված հասարակական կազմակերպություններ, որոնց գործունեությունը կարգավորվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով և անդամության վրա չհիմնված հիմնադրամներ, որոնք կարգավորվում են «Հիմնադրամների մասին» օրենքով: Հասարակական կազմակերպության գրանցումն իրականացվում է տաս աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հիմնադրամների գրանցման գործընթացը տևում է տասնհինգ աշխատանքային օր: ՔՀԿ-ների գրանցման առցանց համակարգը դեռևս բացակայում է: ՔՀԿ-ները կարող են գործառնել առանց գրանցման, քանի դեռ նրանց գործունեությունը համապատասխանում է ընդհանուր իրավական կարգավորումներին և նրանք ներգրավված չեն ֆինանսական գործարքներում: Չգրանցված քաղաքացիական հասարակության խմբերն ունեն ֆինանսավորման աղբյուրների հասանելիություն, ինչպես օրինակ դրամահավաքներն են կամ տեղական նվիրատվությունները:

ՔՀԿ-ների գործունեության դադարեցումը կամ լուծարումը շարունակում է մնալ բարդ գործընթաց: Որպես արդյունք գրանցված ՔՀԿ-ների թիվը շարունակում է աճել, քանի որ չգործող կազմակերպությունները շարունակում են գրանցված մնալ ռեգիստրում: Արդարադատության նախարարությունը Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից տրամադրված ցուցակների հիման վրա լուծարում է այն ՔՀԿ-ներին, որոնք ժամանակին չեն տրամադրել համապատասխան

հարկային հաշվետվություններ: Այնունամենայնիվ, ԱՆ-ը չի վարում առանձին վիճակագրություն լուծարված ՔՀԿ-ների թվի վերաբերյալ:

«Հասարակական կազմակերպությունների» և «Հիմնադրամների մասին» օրենքները հստակ սահմանում են հոգաբարձուների խորհրդի, վերահսկիչ կոմիտեի, գործադիր մարմնի և անդամների դերերը և պատասխանատվությունների շրջանակը: Իրավական դաշտը չի սահմանափակում ՔՀԿ-ների թույլատրելի գործունեության շրջանակը: ՔՀԿ-ները կարող են իրենց շահառուներին ներկայացնել դատարանում, որը, սակայն, հնարավոր է միայն նոտարի կողմից վավերացված լիազորագրի առկայության դեպքում, ինչը ենթադրում է լրացուցիչ ծախսեր: ՔՀԿ-ները կարող են հանրային շահը դատարանում ներկայացնել միայն բնապահպանական ոլորտի խնդիրների դեպքում:

Իրավական շրջանակը պաշտպանում է ՔՀԿ-ներին կառավարության չարաշահումներից և ՔՀԿ-ների ներքին գործերին երրորդ կողմի միջամտությունից: ՔՀԿ-ներն իրավունք ունեն կազմակերպել և մասնակցել հանրային խաղաղ ցույցերի: 2019-ի ընթացքում ՔՀԿ-ները և նրանց անդամները չեն հաղորդել այդ իրավունքի խախտման կամ պետական կառույցների կամ պետության անունից գործող խմբերի կողմից իրավունքների ոտնահարման որևէ դեպքի մասին:

Սահմանադրությունը երաշխավորում է խոսքի ազատությունը, և ՔՀԿ-ները կարող են ազատորեն զբաղվել հանրային հարցերով և առանց էական գրաքննության հանդես գալ քննադատությամբ: Այնուամենայնիվ, այն ՔՀԿ-ները, որոնք աշխատում են զգայուն ոլորտներում, ինչպիսիք են օրինակ, ընտանեկան բռնությունը, ԼԳԲՏ համայնքին վերաբերող հարցերը, առավել զգուշավոր են իրենց հաղորդակցություններում: Ավելին, նոր կառավարությանը աջակցող որոշ ՔՀԿ-ների համար խնդիր է դարձել հետհեղափոխական ինքնագրաքննությունը. վերջիններս խուսափում են քննադատել նոր կառավարությանը նրա հեղինակությունը չխաթարելու նպատակով:

«Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի համաձայն այն հասարակական կազմակերպությունները, որոնք պետական աղբյուրներից ստանում են ավելի քան 5 միլիոն ՀՀ դրամ (մոտ 10,000 ԱՄՆ դոլար) ֆինանսավորում, պարտավոր են հրապարակել անկախ աուդիտորական եզրակացություն: ՔՀԿ-ների շահերի պաշտպանության հաջող ջանքերի շնորհիվ 2019 թվականին օրենքում ընդունվել է փոփոխություն, որով կրկնակի բարձրացվել է պարտադիր աուդիտի շեմը մինչև 10 միլիոն դրամ (մոտ 20,000 դոլար): Այնուամենայնիվ, դեռևս շատ ՔՀԿ-ներ ռեսուրսներ չունեն մասնագիտական ֆինանսական աուդիտի դիմաց վճարելու համար: Այդ իսկ պատճառով պետական գնումների գործընթացին մասնակցելիս շատ հասարակական կազմակերպություններ առաջարկվող բյուջեներում ընդգրկում են նաև աուդիտորական ծախսերը, ինչը մեծացնում է ընդհանուր ներկայացվող բյուջեն և նվազեցնում ՔՀԿ-ների մրցունակությունը մասնավոր բիզնեսի համեմատ:

ՔՀԿ-ները կարող են իրականացնել դրամահավաք միջոցառումներ, կազմակերպել նվիրատվական արշավներ և ստանալ նվիրատվություններ արտասահմանից: Նրանք կարող են նաև եկամուտներ ստանալ ապրանքների և ծառայությունների մատուցման ու սոցիալական ձեռնարկություններ հիմնելու միջոցով, սակայն ստացված շահույթը կարող է ուղղվել միայն կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացմանը:

Համաձայն Հարկային օրենսգրքի ՔՀԿ-ները պետք է վճարեն 20 տոկոս ավելացած արժեքի հարկ (ԱԱՀ), եթե նրանց ընդհանուր տարեկան եկամուտը գերազանցում է 58.35 միլիոն ՀՀԴ-ն (շուրջ 117.000 ԱՄՆ դոլար): ՔՀԿ-ներն իրավասու են չվճարել ԱԱՀ որոշակի ծրագրերի և գնումների գործընթացների ներքո ձեռքբերումներ կատարելու համար այն դեպքում, երբ Հայաստանի և դոնոր երկրի միջև առկա է միջկառավարական համաձայնագիր, կամ երբ այդ ծրագրերը կառավարության կողմից հայտարարվում են բարեգործական: Այսպիսի արտոնություններից օգտվելու համար իրավասու ՔՀԿ-ները պետք է դիմեն Պետական հումանիտար հանձնաժողովին: Առևտրային կազմակերպությունները եկամուտները համախառն տարեկան եկամուտի մինչև 0.25 տոկոսի չափով: Անհատ նվիրատուները հարկերի նվազեցման որևէ հնարավորություն չունեն:

Թեև վերջին մի քանի տարիների ընթացքում ՔՀԿ ոլորտը կարգավորող հարկային դրույթները բարելավվել են, ՔՀԿ-ների հարկման աչքի ընկնող խնդիրների ցանկում անորոշությունը և խճճվածությունը դեռևս շարունակում են արդիական մնալ: Որոշ ՔՀԿ ներկայացուցիչներ նշել են, որ ՊԵԿ-ը վերաբերում է ՔՀԿ-ներին ինչպես կվերաբերեր բիզնեսին՝ առանց ընկալելու ՔՀԿ ոլորտի առանձնահատկությունները և կարիքները:

ՔՀԿ-ները, որոնք ուղղակիորեն զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, չեն ստանում հատուկ ֆինանսական արտոնություններ: Ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող ընթացակարգերը և կանոնակարգերը անորոշ են և միմյանցից տարբերվող մեկնաբանությունների տեղիք են տալիս: Օրինակ, թեև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ ուղղակիորեն զբաղվող ՔՀԿ-ները կարող են գործել պարզեցված հարկի դաշտում, սակայն նոր Հարկային օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից որևէ նշում չի պարունակում այդ հարցի վերաբերյալ: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ները պետք է վարեն իրենց ձեռնարկատիրական գործունեության վերաբերյալ առանձին հաշվապահական հաշվառում, ինչը նրանց համար ենթադրում է վարչական բեռի ավելացում:

2019 թվականի ընթացքում սոցիալական ձեռնարկությունների հարկային դաշտը չի փոփոխվել, թեև նոր Հարկային օրենսգրքով առաջարկվում է փոքր ձեռնարկությունների (միկրոբիզնեսների) բարելավված հարկային համակարգ: ՔՀԿ-ները կարող են շահել հարկային այս նոր ռեժիմի ներքո առաջարկվող զգալի ցածր հարկային դրույքաչափերից, եթե նրանց կողմից հիմնադրված սոցիալական ձեռնարկությունները գործեն որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, որոնք նույնպես կարող են համարվել միկրոբիզնեսներ:

Մի շարք կազմակերպություններ ՔՀԿ-ներին տրամադրում են իրավաբանական օգնություն կապված ՔՀԿ օրենքների և կանոնակարգերի հետ: Դրանցից են՝ Իրավաբանների հայկական ասոցիացիան (ԻՀԱ), «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻԱԿ), Ա.Ս. Սախարովի Մարդու իրավունքների պաշտպանության հայաստանյան կենտրոնը, ՀԿ կենտրոնը (ՀԿԿ), Եվրասիական համագործակցության հիմնադրամը (ԵՀՀ) և Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամը (ՔԶՀՀ): Օրինակ, 2019 թվականի ընթացքում ԻՀԱ-ն իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել 207 հասարակական կազմակերպությունների այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են օրինակ, կազմակերպության վերագրանցումը և կանոնադրության կազմումը: Այնուամենայնիվ, երկրում շատ քչերն են մասնագիտանում ՔՀԿ իրավական դաշտի մեջ այսպիսի ծառայությունների նկատմամբ պահանջարկի ցածր լինելու պատճառով:

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: 3.4

2019 թվականին ՔՀԿ հատվածում կազմակերպչական կարողությունները փոքր-ինչ բարելավվել են: Անցած մի քանի տարիների ընթացքում դոնորների կողմից ֆինանսավորվող մի շարք ծրագրեր աջակցել են ՔՀԿ-ների կազմակերպական կարողությունների զարգացմանը՝ ներառյալ առաքելությունների, կազմակերպական կառուցվածքների, քաղաքականությունների և ընթացակարգերի, թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների կառավարման զարգացումը: Այս ծրագրերի թվում են եղել ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների

կարողությունների հզորացմանը» (STRONG CSOs for Stronger Armenia) (2015-2018), ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «ՔՀԿ Դեպո» (CSO DePo, 2014-2019) , «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» (2014-2021) և ԵՄ կողմից ֆինանսավորվող «ՔՀԿ Կամուրջ» (Bridge for CSOs 2016-2019) ծրագրերը: Այս ծրագրերի ազդեցության արդյունքում բարձրացել են ՔՀԿ-ների՝ իրենց պոտենցիալ վստահորդներին և շահառուներին զատորոշելու և նրանց հետ հարաբերություններ հաստատելու կարողությունները: Որպես կանոն, մարզային ՔՀԿ-ներն առավել քաջատեղյակ են իրենց շահառուների կարիքներին՝ մայրաքաղաք Երևանում գործող կազմակերպությունների համեմատ:

Որոշ չափով դոնորների կողմից ֆինանսավորվող կարողությունների զարգացման այս ծրագրերի արդյունքում ՔՀԿ-ները ավելի մեծ ուշադրություն են սկսել դարձնել նպատակների, առաքելությունների և գործողությունների ծրագրերի մշակմանը, և ավելի մեծ թվով ՔՀԿ առաջնորդներ են սկսել գիտակցել ռազմավարական պլանների և ռազմավարական պլանավորման տեխնիկաների կիրառման անհրաժեշտությունը: Ի լրումն՝ առավել շատ մեթոդական ուղեցույցեր են հասանելի դարձել, ինչպես նաև դաշտում ավելացել է ռազմավարական պլանավորման մշակման հարցում ՔՀԿ-ներին աջակցություն ցույց տվող փորձագետների թիվը: Համաձայն ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորված ՔՀԿ Դեպո ծրագրի ավարտական ուսումնասիրության, որն իրականացրել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը (ՀՌԿԿ-Հայաստան), 2019 թվականին հարցված ՔՀԿ-ների գրեթե 50 տոկոսը հայտնել է, որ իրենք մշակել են տարեկան ռազմավարական ծրագրեր՝ 2015 թվականի 30 տոկոսի համեմատ: Ավելին, այս ուսումնասիրությունը պարզել է, որ ՔՀԿ-ներն իրենց ռազմավարական զարգացման գործողություններում դարձել են ավելի «ժողովրդավար». ավելի մեծ թվով ՔՀԿ-ներ են հայտնել, որ այս գործընթացներում ներգրավված են եղել խորհրդի անդամները, ՔՀԿ-ների աշխատակազմը, ՔՀԿ-ների անդամները և շահառուները: Այնուամենայնիվ, դեռևս մեծ է այն ՔՀԿ-ների թիվը, որոնք իրենց կողմից իրականացվելիք ծրագրերի շրջանակը սահմանում են՝ հիմք ունենալով հասանելի դրամաշնորհային ռեսուրսները, այլ ոչ թե իրենց ռազմավարական ծրագրերի բովանդակությունը: Առավել մեծ թվով ՔՀԿ-ներ են սկսել գիտակցել քաղաքականությունների, ընթացակարգերի և ներքին կանոնակարգերի համակարգերի կարևորությունը: Համաձայն ՔՀԿ Դեպո ավարտական հետազոտության՝ հարցման ենթարկված ՔՀԿ-ների շուրջ 70 տոկոսն ունի ընդունված ներքին կանոնակարգեր և ընթացակարգեր (գրեթե նույն տոկոսը ինչ 2015 թվականի ընթացքում) և այս ՔՀԿ-ների 90 տոկոսը հետևում և պահպանում է այս կանոնակարգերը (առկա է նշանակալի առաջընթաց 2015 թվականի 62 տոկոսի համեմատ): ՔՀԿ Դեպո ծրագրի շրջանակներում մշակվել են մի շարք ուղեցույցեր, որոնք կարող են կիրառվել ՔՀԿ-ների կողմից ներքին մենեջմենթի բարելավման համար: ՔՀԿ Դեպո առցանց հարթակը նույնպես տալիս է կարողությունների զարգացման գործիքներ, որոնք բավականին հանրայնացված են ՔՀԿ-ների շրջանում:

ՔՀԿ-ների ներքին կառավարումը դարձել է առավել արդյունավետ դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում ստեղծված մի շարք վարչարարական ձևանմուշների և ուղեցույցերի առկայության շնորհիվ: Թեև որոշ ՔՀԿ-ների շրջանում շարունակում է արդիական մնալ շահերի բախման խնդիրը, ՔՀԿ-ները հիմնականում գիտակցում են անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը այդպիսի դեպքերը նվազագույնի հասցնելու համար:

Որպես կանոն, ՔՀԿ-ներն աշխատակիցներ են ներգրավում կարճաժամկետ պայմանագրային հիմունքներով ֆինանսավորման առկայության դեպքում: Մշտական և բարձր որակավորում ունեցող անձնակազմի ներգրավումը ՔՀԿ-ների մեծ մասի համար խնդիր է, քանի որ միայն քիչ թվով ՔՀԿ-ներ ունեն երկարաժամկետ ֆինանսավորում: Համաձայն ՔՀԿ Դեպո ավարտական հետազոտության՝ հարցման ենթարկված ՔՀԿ-ների շուրջ 80 տոկոսը ներգրավել են առնվազն մեկ կամավոր հետազոտությանը նախորդող տարվա ընթացքում, և գրեթե նույն արդյունքն է գրանցվել 2015 թվականին: ՔՀԿ-ները սկսել են ավելի շատ օգտվել հաշվապահական, հանրային կապերի կամ այլ աջակցող ոլորտների մասնագետների ծառայություններից:

Գրասենյակային տարածքների վարձակալության դրույքաչափերը բավականին բարձր են և գնալով ավելի են բարձրանում՝ հատկապես մայրաքաղաք Երևանում: Այս պատճառով, որոշ ՔՀԿ-

ների համար օրախնդիր է դառնում մշտական գրասենյակների պահպանումը: Մարզերում գործող որոշ ՔՀԿ-ների՝ հատկապես երիտասարդական ՔՀԿ-ների, տրամադրվում են անվճար գրասենյակային տարածքներ համայնքային շենքերում:

ՔՀԿ-ները կարող են իրենց թույլ տալ արդիականացնել գրասենյակային գույքը և սարքավորումները միայն ֆինանսավորման առկայության դեպքում: Ինտերնետ կապը ընդհանուր առմամբ հասանելի է ամբողջ երկրում և համեմատաբար մատչելի է: ՔՀԿ-ների մեծ մասն ունեն վեբ կայքեր և ակտիվ են սոցիալական ցանցերում, հատկապես՝ Ֆեյսբուքում: Սոցիալական մեդիայի այլ հարթակներն ավելի քիչ են տարածված:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ: 4.9

ՔՀԿ-ների ֆինանսական կենսունակությունը 2019-ին էապես չի փոխվել և այն դեռևս շարունակում է մնալ ՔՀԿ-ների կայունության ամենաթույլ ոլորտը: Մի կողմից 2019-ին ավարտվեցին դոնորների կողմից ֆինանսավորվող մի շարք խոշոր երկարաժամկետ ծրագրեր, մյուս կողմից ՔՀԿ-ներն անընդհատ փորձում են դիվերսիֆիկացնել իրենց ֆինանսավորման աղբյուրները, այդ թվում դրամահավաքների, սոցիալական ձեռնարկությունների ստեղծման և ծառայությունների մատուցման միջոցով:

ՔՀԿ ոլորտում իրականացված տարաբնույթ ուսումնասիրություններ փաստում են, որ ֆինանսական ռեսուրսների պակասը հայաստանյան ՔՀԿ-ների առջև ծառացած ամենաառաջնային խնդիրն է: Ըստ 2019 թվականին իրականացված ՔՀԿ Դեպո ծրագրի ավարտական ուսումնասիրության՝ հարցմանը մասնակցած ՔՀԿ-ների գրեթե կեսի ներկա և հեռանկարային ֆինանսական ռեսուրսները բավարար կլինեին միայն մինչև մեկ տարվա գործունեության ֆինանսավորմանը: Հարցված ՔՀԿ-ների միայն 20 տոկոսն ունի բավարար ֆինանսական ռեսուրսներ երկու և ավել տարի գործունեության ֆինանսավորման համար: Հարցված ՔՀԿ-ների ճնշող մեծամասնությունը նշել է, որ առկա ֆինանսական ռեսուրսները կբավարարեն միայն պահպանման ծախսերին և չունեն կազմակերպչական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:

ՔՀԿ-ները, ընդհանուր առմամբ, գիտակցում են ֆինանսավորման տարբեր աղբյուրների հասանելիություն ունենալու կարևորությունը, որը կարող է նպաստել նրանց ֆինանսական կենսունակության բարձրացմանը, և շարունակական ջանքեր են գործադրում իրենց ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման ուղղությամբ: Այնուամենայնիվ, միջազգային զարգացման կազմակերպությունները շարունակում են մնալ ՔՀԿ-ների ֆինանսավորման հիմնական աղբյուրը: ՔՀԿ Դեպո ծրագրի ավարտական ուսումնասիրության համաձայն հարցված ՔՀԿ-ների գրեթե 40 տոկոսը հայտնել է, որ ապավինում է միջազգային դոնորների դրամաշնորհներին՝ որպես եկամտի առաջնային աղբյուր՝ 2015 թվականի 43 տոկոսի համեմատ:

Օտարերկրյա հիմնական դոնորներն են ԵՄ-ն, ԱՄՆ ՄԶԳ-ն և երկկողմ դոնորները, այդ թվում՝ Շվեդիայի, Նիդեռլանդների և Գերմանիայի կառավարությունները: 2019-ին ՔՀԿ-ները կրել են դոնորների ֆինանսավորման մակարդակի և առաջնահերթությունների փոփոխությունների ազդեցությունը, քանի որ դոնորների հիմնական մասը նախապատվություն է տվել նոր կառավարության հետ աշխատանքին կարիքների զատորոշման նպատակով: 2018 և 2019 թվականներին երկրում ավարտվել են դոնորների կողմից ֆինանսավորվող չորս լայնածավալ ծրագրեր՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» (STRONG CSOs for Stronger Armenia) (2015-2018), ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «ՔՀԿ Դեպո» (CSO DePo, 2014-2019), ԵՄ կողմից ֆինանսավորվող «ՔՀԿ Կամուրջ» (Bridge for CSOs 2016-2019) և ԵՄ կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» (Commitment to Constructive Dialogue) (2017-2019) ծրագրերը:

Այս ծրագրերի ամփոփման արդյունքում տեղական ՔՀԿ-ները 2019-ին կանգնեցին զգալի ֆինանսական մարտահրավերների առջև: 2019-ին տեղական ՔՀԿ-ները նաև ավելի քիչ հնարավորություններ ունեին մասնակցելու ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող այլ դրամաշնորհային մրցույթներին, քանի որ այս ծրագրերը պահանջում էին հայաստանյան ՔՀԿ-ների մասնակցություն եվրոպական կայացած որևէ ՔՀԿ-ների ղեկավարած կոալիցիայի կազմում: Ծրագրերի շրջանակը նեղացավ, և մեծ թվով դրամաշնորհային առաջարկների համար Հայաստանն այլևս շահառու երկրների ցանկում չէր: Բացի այդ, որոշ դոնոր կազմակերպություններ Թավշյա հեղափոխության ֆոնին սկսեցին վերանայել երկրին տրամադրվող իրենց աջակցության ռազմավարությունները, ինչը հանգեցրեց դրամաշնորհային ծրագրերի ժամանակավոր սառեցմանը: Մյուս կողմից որոշ դոնորներ շարունակում էին պարբերաբար տրամադրել փոքր դրամաշնորհներ: Այսպիսի դոնորների թվում էին ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ), Բաց հասարակության հիմնադրամները (ԲՀՀ), Ռոբերտ Բոշ հիմնադրամը, Սևծովյան տարածաշրջանային համագործակցությունը, Հանուն ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամը, Պրահայի քաղաքացիական հասարակության կենտրոնը, ինչպես նաև դրամաշնորհային ծրագրեր էին իրականացվում ԱՄՆ, Լիտվայի և Ճապոնիայի դեսպանատների կողմից:

Հարկային արտոնությունները հիմնականում անբավարար են անհատական և կորպորատիվ բարեգործությունը խթանելու համար: Որոշ ՔՀԿ ներկայացուցիչներ՝ հատկապես բարեգործական և երեխաների պաշտպանության հարցերով զբաղվող ՔՀԿ-ներ, բարձրաձայնեցին մասնավոր բիզնեսներից միջոցներ հավաքելու դժվարությունների մասին, մասնավորապես պայմանավորված վարչապետի տիկնոջ կողմից ղեկավարվող երկու նորաստեղծ հիմնադրամների՝ «Իմ քայլը» և «Ժպիտների քաղաք» հիմնադրամների գործունեությամբ, որոնք տարվա ընթացքում ներգրավում են մասնավոր հատվածից նվիրատվությունների առյուծի բաժինը: Մասնավոր գործարարները համարում են, որ այս՝ «կառավարության հետ նույնականացվող» ՔՀԿ-ներին նվիրատվություն կատարելն առավել նպատակահարմար է իրենց բիզնես շահերի տեսանկյունից, քան այլ հայտնի բարեգործական կազմակերպություններին նվիրատվություններ կատարելը:

ՔՀԿ-ներն ավելի ու ավելի շատ են սկսում կիրառել դրամահավաքի նոր մեթոդներ, այդ թվում՝ առցանց հարթակների կամ էլեկտրոնային այլ գործիքների միջոցով դրամահավաքների իրականացումը: Օրինակ, «Ժպիտների քաղաք» հիմնադրամը նախաձեռնել էր դրամահավաք-քարոզարշավ՝ օգտագործելով բջջային հեռախոսների միջոցով նվիրատվություն կատարելու գործիքներ, որն ուղեկցվում էր հեռուստատեսությամբ իրականացվող սոցիալական գովազդային արշավով: Այնուամենայնիվ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) դեռևս արդյունավետ են միայն անհատական բարեգործական գործունեության համար, և ՔՀԿ-ների մեծամասնությունը դեռևս չունի անհրաժեշտ տեխնիկական կարողություններ առավել համալիր դրամահավաք արշավների նախագծման և կառավարման համար: Անդամության վրա հիմնված կազմակերպությունների մեծ մասը հավաքագրում է անդամավճարներ, որոնք, որպես կանոն, կազմում են շատ փոքր գումարներ:

Կենտրոնական և տեղական իշխանությունները ՔՀԿ-ներին տրամադրում են փոքր դրամաշնորհներ, ինչպես նաև ՔՀԿ-ներին են արտապատվիրում փոքր ծավալի սոցիալական ծառայությունների մատուցումը: 2019 թվականին դրամաշնորհների և սուբսիդիաների ծավալը, որոնք տրվել են շահույթ չհետապնդող ոչ պետական և ոչ առևտրային (հասարակական) կազմակերպություններին, կազմել է շուրջ 11.1 միլիարդ ՀՀԴ (շուրջ 22 միլիոն ԱՄՆ դոլար), իսկ 2018 թվականին այս ցուցանիշը կազմել է շուրջ 10.8 միլիարդ ՀՀԴ:

2018 թվականի քաղաքական փոփոխություններից հետո կառավարության ներկայացուցիչները հայտարարեցին, որ պետական դրամաշնորհների տրամադրման գործընթացը դառնում է ավելի բաց

և թափանցիկ: Այնուամենայնիվ, համաձայն «ՔՀԿ չափիչ» ուսումնասիրությունում ներկայացված ՔՀԿ-ների կարծիքների, որը Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության միջավայրի գնահատմանն ուղղված գործիք է, ֆինանսական աջակցությունը դեռևս շարունակվում է ՔՀԿ-ներին տեղաբաշխվել ոչ մրցակցային գործընթացների միջոցով՝ ըստ «միայն ընդունելի ՔՀԿ-ներին» սկզբունքի: Ընդհանուր առմամբ, պետական ֆինանսավորման համար բացակայում է ռազմավարական ուղղվածությունը:

Շատ սոցիալական ձեռնարկությունների հաջողվում է ստանալ եկամուտներ, ինչն օժանդակում է ՔՀԿ գործառնություններին և աջակցության հնարավորություն է ստեղծում խոցելի խմբերի և սոցիալական խնդիրների լուծման համար: Օրինակ, 2019 թվականին «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի կողմից Սյունիքի մարզի մի շարք խորոշացված համայնքներում իրականացվել է գյուղատնտեսական ապրանքների արտադրություն, որ արդյունքում գեներացված եկամուտներն ուղղվել են Տաթև բնակավայրի կենտրոնական պուրակի վերանորոգմանը: «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն գյուղատնտեսական արտադրանք է տրամադրել նաև համայնքի դպրոցին և մանկապարտեզին: Հաջող սոցիալական ձեռնարկությունների այլ օրինակներ են նաև «Արեգակը»՝ առաջին ներառական և առանց սահմանների փուռ-սրճարանը Գյումրիում, Սարերի Բարիքը, որը մասնագիտացած է թեյերի և դեղաբույսերի արտադրության մեջ, «Բոհեմ» արտ-սրճարանը Սևանում:

ՔՀԿ-ները շարունակաբար բարելավում են իրենց ֆինանսական կառավարման համակարգերը կառավարության և դոնորների խստացող պահանջները բավարարելու համար: Դոնորների կողմից ֆինանսավորվող կարողությունների զարգացման ծրագրերը հաճախ անդրադառնում են ֆինանսական կառավարման և ֆինանսական կայունության խնդիրներին: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները հազվադեպ են աուդիտի ենթարկում իրենց հաշվառումը և գործառնությունները, եթե դա չի պահանջվում դոնորների կամ պետության կողմից: Ընդհանուր առմամբ, ՔՀԿ-ները տարեկան հաշվետվություններ են հրապարակում ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ, եթե դա պահանջվում է օրենքով կամ առկա է պահանջ դոնորների կողմից:

ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ: 2.7

ՔՀԿ-ների շահերի պաշտպանությունը մի փոքր բարելավվել է 2019 թվականին: ՔՀԿ-ների համար պետական պաշտոնյաների հետ փոխառնչության հնարավորություններն ընդլայնվել են, և ՔՀԿ-ների կողմից հանրային քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության մի քանի հաջող նախաձեռնություններ օգնել են ձևավորել օրենսդրական ակտեր և հանրային օրակարգեր:

2018-ի ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած քաղաքական փոփոխություններից հետո իշխանական նոր պաշտոնյաները հանրության համար դարձան առավել հասանելի՝ շնորհիվ սոցիալական մեդիա հարթակների, որոնց միջոցով նրանք հաղորդակցվում էին իրենց ընտրազանգվածի և քաղաքացիական հասարակության հետ: Դոնորների կողմից ֆինանսավորված և նախկինում իրականացված մի շարք ծրագրեր նույնպես բարելավել են ՔՀԿ-ների՝ ազգային և տեղական իշխանությունների հետ աշխատելու կարողությունները՝ ավելացնելով ՔՀԿ-ների վերահսկողությունը կառավարության թափանցիկության և հաշվետվողականության բարելավմանն ուղղված ջանքերի վրա:

Բոլոր նախարարություններն ունեն կից հանրային խորհուրդներ, որոնցում ընդգրկված են նաև ՔՀԿ-ները: ՔՀԿ ներկայացուցիչները նաև հրավիրվել են մասնակցելու 2019-ի ընթացքում քաղաքական բարեփոխումների և այլ թեմաների վերաբերյալ խորհրդարանական լսումներին: ՔՀԿ-

ները կարող են «e-draft.am» հարթակում ստանալ տեղեկատվություն առաջարկվող իրավական ակտերի վերաբերյալ, ինչպես նաև կարող են այս հարթակում իրենց մեկնաբանություններն ու առաջարկությունները ներկայացնել առաջարկվող օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, որոշ ՔՀԿ ներկայացուցիչներ կարծում են, որ այս հարթակն ունի սահմանափակ արդյունավետություն՝ պայմանավորված պետական մարմինների հետ բովանդակալից քննարկման և հաղորդակցության բացակայությամբ: Բացի այդ, որոշ ՔՀԿ-ներ կարծում են, որ պետական պաշտոնյաները շատ հաճախ պատրաստ չեն ընդունել ներկայացված առաջարկությունները, կամ, որ նրանց առաջարկությունները ընդունվում են միայն «ընդունված լինելու» համար, այլ ոչ թե այն պատճառով, որ նրանք իրապես ցանկանում են գործել ըստ առաջարկվող փոփոխությունների: Բացի այդ, որոշ ՔՀԿ-ներ մտավախություն են հայտնել, որ պետական մարմինները չունեն ամուր պատրաստակամություն հանձնառելու և լուծելու բարդ հասարակական խնդիրներ: Ավելին, ՔՀԿ-ները հայտնում են, որ 2019-ին ՔՀԿ շահերի պաշտպանությանն ուղղված ջանքերի արդյունավետությունը հաճախ փոքր է եղել 2018-ի քաղաքական անցման արդյունքում ազգային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյանների պարբերական փոփոխությունների պատճառով:

2019-ին տեղական ինքնակառավարման մարմիններն ավելի համագործակցային էին, թափանցիկ և փորձում էին աջակցել ՔՀԿ նախաձեռնություններին: Օրինակ՝ «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ն հայտնում է, որ Տաթևի, Տեղի, Գորիսի և Սիսիանի տեղական ինքնակառավարման մարմինները տրամադրված էին համագործակցային ԵՄ կողմից ֆինանսավորվող «Հանրային վերահսկողություն համայնքային զարգացման համար» ծրագրի իրականացման ընթացքում: Տեղական համայնքապետարանները տրամադրել են հետազոտության համար անհրաժեշտ բոլոր տվյալները, հյուրընկալել են արդյունքների ներկայացման միջոցառումները և պատրաստակամություն են հայտել իրենց հետագա գործունեության որոշակի փոփոխություններ կատարել՝ տրված առաջարկություններին համատասխան:

2019-ին ՔՀԿ-ների և ՔՀԿ կոալիցիաների կողմից իրականացված շահերի պաշտպանությունն իր բարեհաջող ազդեցությունն է ունեցել մի շարք հանրային քաղաքականությունների և իրավական կանոնակարգերի մշակման վրա: ԿԵՀ նախագծի շրջանակներում 156 ՔՀԿ-ներ հնարավորություն են ունեցել ուղղակիորեն երկխոսություն վարել քաղաքականություն մշակողների հետ: Ընդհանուր առմամբ ՔՀԿ-ները մասնակցել են 187 աշխատանքային հանդիպումների/քաղաքականության քննարկումների կենտրոնական կառավարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որոնց մեծ մասը տեղի է ունեցել 2019 թվականին: Պետական պաշտոնյաների և ՔՀԿ-ների միջև մի շարք կառուցողական քննարկումների և նմանատիպ այլ ջանքերի արդյունքում կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերին հաստատեց դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունը:

ՔՀԿ-ները նաև դարձել են շահերի առավել ակտիվ պաշտպաններ տեղական մակարդակներում: Տեղական մի շարք ՔՀԿ-ն եր և ՔՀԿ կոալիցիաներ մասնակցել են տեղական համայնքներում համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի (ՀԶԾ-ների) մշակմանը: Օրինակ, «Ազապե Վորլդ» ՀԿ-ն հաջողությամբ առաջ է մղել Ճամբարակի համայնքի ՀԶԾ-ում երիտասարդության վերաբերյալ դրույթների ներառումը, մինչդեռ «Համայնքի զարկերակ» ԵՀԿ-ի կողմից առաջ է տարվել Վարդենիկի ՀԶԾ-ում գյուղական տուրիզմի զարգացման գործողությունների ներառումը: Այլ ՔՀԿ-ներ հանդես են եկել պատմական շենքերի պահպանման, հանքարդյունաբերական գործունեության դադարեցման և բնապահպանական հարցերին վերաբերող ջատագովությամբ: Բնապահպանական ՔՀԿ-ների և անհատ ակտիվիստների կոալիցիայի հաջող արշավի արդյունքում դադարեցվեց Ամուլսարում պլանավորված հանքարդյունաբերական գործունեությունը:

Հաշվետու տարում ՔՀԿ-ները նաև ներգրավվել են լոբբինգի մի շարք հաջողված ջանքերում: Օրինակ, 2019-ի հոկտեմբերին ԱՆ և հակակոռուպցիոն կոալիցիայի միջև ծավալուն համագործակցությունից հետո կառավարությունը մշակեց և ընդունեց Ազգային հակակոռուպցիոն ռազմավարությունը և 2019-2022 թվականների գործողությունների իրականացման ծրագիրը: Կոալիցիայի 133 առաջարկներից 101-ը ամբողջությամբ և / կամ մասնակիորեն ներառված էին

վերջնական ռազմավարությունում: 2019 թվականին «Կառուցողական երկխոսության ցանցի» կոալիցիայի քարտուղարության լոբբիստական ջանքերի արդյունքում ԻՀԱ-ն կառավարության միջնաժամկետ ծախսերի պլանավորման գործընթացի ընթացքում կազմակերպեց ավելի քան երկու տասնյակ հանրային քննարկումներ պետական մարմինների հետ, և ՔՀԿ-ների շատ առաջարկներ ընդունվեցին որպես արդյունք:

ՔՀԿ համայնքը պարբերաբար համագործակցում է տարբեր պետական գերատեսչությունների և հաստատությունների հետ ոլորտի համար առավել բարենպաստ իրավական և կարգավորող դաշտի խթանման համար: 2019 թվականի դեկտեմբերին կառավարությունը հավանություն տվեց «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխությունների կատարմանը, որը մշակվել էր ՊԵԿ-ի և ՀԿ-ների և հիմնադրամների թափանցիկության և հաշվետվողականության ապահովման հիմնախնդիրների շուրջ հավաքված աշխատանքային խմբի կողմից, որում ներառված էին ավելի քան 100 ՔՀԿ: Արդյունքում, հանրային միջոցներով ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համար աուդիտի պահանջի շեմը 5 միլիոն դրամից բարձրացվեց՝ հասնելով 10 միլիոն դրամի: ԹԻՀԿ-ը աշխատել է ՊԵԿ-ի հետ՝ որոշ դեպքերի համար կանխելով ՔՀԿ-ների համար ավելորդ և ոչ անհրաժեշտ հաշվետվությունների և հաշվետվողականության սահմանափակումների ընդունումը: Ավելին, մի շարք ՔՀԿ-ներ՝ ներառյալ Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիան (ՀՍՁԱ), շարունակաբար աշխատել են կառավարության հետ՝ բարելավելու նրանց պատկերացումները սոցիալական ձեռնարկատիրության վերաբերյալ: 2019-ին ՔՀԿ-ները և կառավարությունը քննարկումներ են անցկացրել սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հայեցակարգի վերաբերյալ, որի արդյունքում հայեցակարգային փաստաթուղթը վերջնականացվեց և ներկայացվեց e-draft էլեկտրոնային հարթակում հրապարակման:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ: 3.7

ՔՀԿ ծառայությունների մատուցումը նշանակալի փոփոխությունների չի ենթարկվել 2019 թվականին: ՔՀԿ ոլորտը շարունակում է մատուցել տարբեր տեսակի ապրանքներ և ծառայություններ՝ առավել շատ ներգրավվածություն ունենալով մարդու իրավունքների պաշտպանության, երիտասարդության, կրթության, ժողովրդավարության, համայնքային զարգացման, քաղաքացիական հասարակության զարգացման և սոցիալական հիմնախնդիրների լուծման ոլորտներում: Առավել շատ թվով ՔՀԿ-ներ են սկսել կիրառել շուկայի հետազոտության և կարիքների գնահատման գործիքներ իրենց համայնքների և շահառուների առավել առաջնահերթ կարիքների բացահայտման նպատակով:

ՔՀԿ-ները կարող են մասնակցել պետական գնումների գործընթացներին և՛ ազգային, և՛ տեղական մակարդակներում: ՔՀԿ-ներին ծառայություններ են արտապատվիրում և՛ կենտրոնական կառավարման, և՛ տեղական ինքնակառավարման մարմինները: Օրինակ՝ կառավարությունը Արցախում տեղի ունեցած ընտրությունների դիտորդական առաքելության ծառայությունը արտապատվիրեց Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ-ին և ԹԻՀԿ-ին:

Որպես կանոն, ՔՀԿ-ները ծառայությունների մատուցման ընթացքում չեն կիրառում խտրականություն ըստ ռասայի, սեռի, էթնիկ պատկանելիության կամ սեռական կողմնորոշման՝ համաձայն Սահմանադրության և ՀԿ-ների և Հիմնադրամների մասին օրենքների դրույթների:

ՔՀԿ-ները շարունակաբար որոնում են ծառայությունների մատուցմամբ եկամուտների ստացման նոր եղանակներ, այդ թվում սոցիալական ձեռնարկությունների գործարկման միջոցով: Նախկինում իրականացված մի շարք կարողությունների զարգացման ծրագրեր, որոնք ֆինանսավորվել են ԵՄ-ի, Մերձավոր Արևելքի հիմնադրամի - Միացյալ Թագավորություն, Կանանց զարգացման ռեսուրսային կենտրոն հիմնադրամի (ԿԶՌԿ) և Վորլդ Վիժն Հայաստանի կողմից, ՔՀԿ-ներին փոխանցել են իրենց կողմից մատուցվող ծառայությունների խթանման և եկամուտների գեներացման հմտություններ: Այնուամենայնիվ, դեռևս կարիք կա բարելավելու ՔՀԿ-ների՝ շուկայավարության և սպառողներ գտնելու կարողությունները:

2019 թվականին կառավարությունն ավելի շատ հետաքրքրություն է ցուցաբերել ՔՀԿ կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ: ՔՀԿ-ների նկատմամբ կառավարության վստահությունը և գնահատանքը աճել է, հատկապես, երբ խոսքը վերաբերում է սոցիալական ծառայությունների մատուցմանը, ընտրական գործընթացների վերահսկողությանը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ հանրային մշտադիտարկման ոլորտներին: Կառավարության ներկայացուցիչները, որոնցից շատերը նախկինում եղել են հենց ՔՀԿ համայնքից, իրենց հանրային խոսքում սկսում են անդրադառնալ ՔՀԿ-ների կողմից ծառայությունների մատուցման կարևորությանը: Թեև կառավարությունը ՔՀԿ ոլորտին է արտապատվիրում ծառայություններ, այն սովորաբար տեղի է ունենում կարճաժամկետ գրանտային աջակցության ձևով՝ երկարաժամկետ համագործակցության փոխարեն: Սահմանափակ թվով երկարաժամկետ ֆինանսավորում հասանելի է այն ՔՀԿ-ներին, որոնք ունեն սոցիալական համագործակցության պայմանագրեր կառավարության հետ, առավել հաճախ՝ ուղղված սոցիալական ծառայությունների մատուցմանը:

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ: 3.0

ՔՀԿ ոլորտին աջակցող ենթակառուցվածքները նշանակալի փոփոխությունների չեն ենթարկվել 2019 թվականին: Ինչպես նախորդ տարիների ընթացքում, 2019 թվականին, նույնպես, ՔՀԿ-ներն ունեին Միջանկյալ աջակցող կազմակերպությունների (ISO) և ռեսուրս կենտրոնների կողմից մատուցվող աջակցության, վերապատրաստման և տեղեկատվական ռեսուրսներին հասանելիություն, ինչպես օրինակ, ԵՀՀ-ն է, ՀԿ Կենտրոնը, Գործընկերություն և ուսուցում ՀԿ-ն, ԹԻՀԿ-ն և Ինֆոտների ցանցը: 2016 թվականին ՔՀԿ Դեպո ծրագրի ներքո ստեղծված հարթակը շարունակում է ներկայացնել ՔՀԿ ոլորտային տեղեկատվություն, հայտարարություններ և ռեսուրներ մեկ աղբյուրում: Ե՛վ Երևանում գործող, և՛ մարզային ՀԿ-ներն ունեն կարողությունների զարգացման և վերապատրաստումների մասնակցելու հնարավորություն: Միջանկյալ աջակցող կազմակերպությունները և ռեսուրս կենտրոնները որոշակի վճարովի ծառայություններ են մատուցում ՔՀԿ-ներին, այնինչ այլ ծառայություններ ՔՀԿ-ներին տրամադրվում են անվճար՝ դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ

2019 թվականի ընթացքում նշանակալի վերագրանտավորման ծրագրեր չեն իրականացվել: Վերագրանտավորման խոշոր ծրագիր՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ԿԵՀ ծրագիրը, որն իրականացվում էր Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից, ավարտվել է 2019 թվականին:

ԵՄ կողմից ֆինանսավորվող ԿԵՀ ծրագրի շրջանակներում ստեղծվել են ՔՀԿ տասնհինգ կոալիցիաներ՝ ներառելով ընդհանուր առմամբ 260 անդամ կազմակերպություններ: Այս

կոալիցիաները պետական մարմինների հետ ստորագրել են փոխըմբռնման հուշագրեր և համաձայնագրեր՝ ուրվագծելով ապագա համագործակցության շրջանակները: 2019 թվականին ԿԵՀ-ը շուրջ 8.5 միլիոն ՀՀԴ բյուջեով (շուրջ 17,800 ԱՄՆ դոլար) ինը ենթադրամաշնորհիներ տրամադրեց յուրաքանչյուր նոր ստեղծված կոալիցիայի իրենց տեխնիկական և ինստիտուցիոնալ կարողություններո ուժեղացնելու և զարգացնելու համար: Համաձայն ներքին գնահատումների՝ 2019 թվականի դրությամբ բոլոր 15 կոալիցիաները եղել են ակտիվ: Օրինակ, Հայկական բիզնես կոալիցիան մասնակցել է Բիզնես հարթակի ստեղծմանը, «Հայկական ազգային առողջապահական ազգային խորհուրդ» կոալիցիան իրականացնում է նոր ծրագրեր ԱՄՆ դեսպանատան կողմից տրամադրվող ֆինանսավորմամբ, իսկ Հայաստանի Գյուղատնտեսական Դաշինքը շարունակում է իրականացնել ջատագովություն կոոպերատիվների իրավական դաշտի բարելավման ուղղությամբ: 2019 թվականի փետրվարին այս կոալիցիաներից տասը հիմնադրել են Հայաստանի կառուցողական երկխոսության ցանցը: ՔՀԿ Դեպո ավարտական զեկույցը փաստում է, որ ՔՀԿ-ներն առավել պատրաստակամ է դարձել ներգրավվելու կոալիցիաներում, ցանցերում և խմբերում: 2019 թվականին հարցմանը մասնակցած ՔՀԿ-ների 80 տոկոսը ցանկություն է հայտնել միանալ այսպիսի մարմինների՝ 2015 թվականի 50 տոկոսի համեմատ: Հետազոտությունը նաև վկայում է, որ հարցմանը մասնակցած ՔՀԿ-ների 67 տոկոսը որևէ կոալիցիայի, ցանցի կամ խմբի անդամ է:

Կարողությունների զարգացման և վերապատրաստման հասանելի ծրագրերն ընդգրկում են կազմակերպչական կառավարման բազմազան ասպեկտներ՝ այդ թվում ռազմավարական կառավարումը, ֆինանսական կառավարումը, ֆոնդահայթայթումը, սոցիալական ձեռներեցությունը, հետազոտության մեթոդներն ու կարիքների գնահատումը, շահառուների սահմանումը և շահերի պաշտպանությունը: 2018-ի նոյեմբերին Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) գործարկել է ոչ առևտրային կառավարման ոլորտում հավաստագրման ծրագիր՝ ՔՀԿ Կամուրջ ծրագրի շրջանակներում: 2019 թվականի ավարտի դրությամբ Երևանից և այլ մարզերից գրեթե վաթսուն ՔՀԿ ներկայացուցիչներ մասնակցել են այս ծրագրին: ՀՌԿԿ հայաստանյան գրասենյակը 2019-ին կազմակերպել է ՔՀԿ ներկայացուցիչների հետազոտական կարողությունների զարգացման երկու ամառային դպրոց՝ ուղղված ավելի ուժեղ քաղաքացիական հասարակության խթանմանը և ապացույցների վրա հիմնված քաղաքականությունների մշակմանը: Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետում անցկացվում է ՔՀԿ կառավարման վերաբերյալ վեցամսյա ինտենսիվ ակադեմիական կուրս: Մասնավոր սուբյեկտները նույնպես հասարակական կառավարման վերաբերյալ դասընթացներ են իրականացնում: Օրինակ, 2019 թվականին Պրոֆմայնդ կազմակերպությունն իրականացրել է տասը դասընթաց դրամաշնորհային առաջարկների մշակման և սոցիալական ձեռներեցության վերաբերյալ. յուրաքանչյուր դասընթացի մասնակցել է ՔՀԿ 12 ներկայացուցիչ:

Վերջին քաղաքական փոփոխություններից ի վեր ՔՀԿ-ները սկսել են ակտիվ համագործակցել կառավարության հետ: Օրինակ՝ «Վարորդի ընկեր» հասարակական կազմակերպությունը և մի շարք ոչ ֆորմալ քաղաքացիական խմբեր սկսել են ակտիվ համագործակցել կառավարության և ոստիկանության հետ՝ ուղղված ճանապարհային երթևեկության անվտանգության նոր կարգավորումների ներդրմանը: Լրատվամիջոցները նույնպես ակտիվորեն մասնակցել են այս գործընթացներին: Կառավարությունը սկսել է աշխատել Վորլդ Վիժն Հայաստանի և Իմ քայլը հիմնադրամի հետ՝ նպատակ ունենալով օգնել խոցելի և անապահով ընտանիքներին հաղթահարելու ծայրահեղ աղքատությունը: Լրատվամիջոցների կողմից իրականացվել է այս գործընթացների լայն լուսաբանում հիմնախնդրի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով: ՔՀԿ-ները նաև որոշակի համագործակցություն են սկսել բիզնես ոլորտի հետ: Օրինակ՝ «Պահապան» զարգացման հիմնադրամը վաճառում է Տավուշի մարզում արտադրված գյուղատնտեսական արտադրանքը Երևանում գործող ռեստորաններին և սրճարաններին, որի արդյունքում գեներացված միջոցներով կառուցվում են խաղապաստարաններ Տավուշի սահմանամերձ համայնքներում ապրող շուրջ տասը հազար երեխաների համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ: 3.7



ՔՀԿ-ների հանրային իմիջը 2019 թվականին էապես չի փոխվել: Թեև ՔՀԿ-ները 2018 թվականի քաղաքական փոփոխություններից հետո ավելի ու ավելի տեսանելի էին դառնում, սակայն նրանք նաև դառնում էին լայն ընդգրկում ունեցած բացասական հրապարակումների և ապատեղեկատվական արշավների թիրախ, որոնք շատ հաճախ ղեկավարվում էին նախորդ ռեժիմի աջակիցների կողմից:

ՔՀԿ-ների վերաբերյալ դրական մեդիա նյութերի թիվը աճել է ազգային մակարդակում՝ հատկապես ավանդական հեռուստատեսային ալիքներով: Բացի այդ, ՔՀԿ ներկայացուցիչներին սկսում են առավել հաճախ հրավիրել մասնակցելու հեռուստատեսային քննարկումներին: Մի շարք լրատվական հարթակներ, ինչպիսիք են օրինակ «Հոդված 3» ակումբը (կառավարվում է «Հանուն հավասար իրավունքների» ՀԿ-ի կողմից), «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը» (կառավարվում է «Հանրային լրագրության ակումբի» կողմից), Ազատություն ռադիոկայանը (ԱՄՆ), Սիվիլնեթ հայաստանյան օնլայն պարբերականը, Ֆակտոր Թիվին, և Ինֆոքոմ տեղեկատվական կոմիտեն, հանրությանն են տրամադրում տեղեկատվություն երկրում ՔՀԿ-ների կարևոր դերակատարման մասին: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող մի շարք նախաձեռնություններ, այդ թվում ՔՀԿ Դեպո և Մեդիան քաղաքացիների տեղեկացված մասնակցության համար (MICE) նախագիծը, նույնպես նպաստել են ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցությանը և քաղաքացիական հասարակության սոցիալական ազդեցության նկատմամբ ԶԼՄ-ների հետաքրքրության բարձրացմանը:

2019 թվականին տեղի ունեցավ հայաստանյան հասարակության բևեռացում լիբերալ հայացքներ կրողների, որոնք հիմնականում աջակցում են նոր իշխանություններին (այսպես կոչված «սպիտակների») և հին ռեժիմի ներկայացուցիչների և աջակիցների (այսպես կոչված «սևերի»), որոնք հիմնականում խթանում էին ավանդական արժեքները, միջև: Հեղափոխությունից հետո հակահեղափոխական ուժերը ներկայիս կառավարությանը ներկայացնում էին որպես հակաընտանեկան արժեքներ ունեցող կամ հակաքրիստոնեական: ՔՀԿ-ները թիրախավորվեցին մի շարք բացասական բնութագրումներով, ինչպիսիք են ՝ «գրանտակերներ» կամ «դրամաշնորհներ վատնողներ», և մեղադրվում էին «ազգային արժեքները ոչնչացնելու» և «օտարերկրյա օրակարգերի խթանման համար»: Հատկանշական է, որ նախորդ վարչակարգին սատարող խմբերն ու ԶԼՄ-ները լայնորեն օգտագործում էին «սորոսական» եզրույթը՝ նկարագրելու և մեղադրելու մի շարք ՔՀԿ-ների՝ արտաքին արժեքների օրակարգի խթանման համար, որոնք ուղղված են ազգային արժեքների ոչնչացմանը և ավանդական ընտանեկան արժեքների խաթարմանը: Այս ջանքերն ազդել են ՔՀԿ ոլորտի առավել լայն հասարակական ընկալման վրա, թեև զուգահեռ առկա էին նաև մի շարք հետաքննական հրապարակումներ, որոնք բացատրում էին ՔՀԿ-ների և կառավարության դեմ արշավի ծագման բնույթը:

Համաձայն Հայաստանի բնակիչների շրջանում անցկացված հասարակական կարծիքի ուսումնասիրության, որն իրականացվել է 2019 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) համար, հարցվածների 52 տոկոսն ունեցել է ՔՀԿ-ների վերաբերյալ դրական կարծիք, 32 տոկոսը՝ բացասական: Սա ենթադրում է որոշակի բարելավում նախորդ տարվա համեմատ. 2018 թվականի աշնանն անցկացված նույն հարցումներում հարցվածների 46 տոկոսը ՀԿ-ների և ՔՀԿ-ների աշխատանքը համարել է դրական, իսկ 38 տոկոսը՝ բացասական:

Թավշյա հեղափոխությունից հետո պետական մարմինների կողմից ՔՀԿ-ների ընկալումը զգալիորեն բարելավվել է: ՔՀԿ շատ ներկայացուցիչներ և քաղաքացիական հասարակության նախկին ակտիվիստներ պաշտոններ ստացան հետհեղափոխական կառավարությունում և խորհրդարանում, ինչը դրականորեն ազդեց կառավարության կողմից ՔՀԿ-ների ընկալման վրա, ինչպես որպես ծառայությունների մատուցողներ, այնպես էլ որպես շահերի պաշտպանությամբ զբաղվողներ: Բիզնես ոլորտի ընկալումը ՔՀԿ-ների նկատմամբ հեղափոխությունից ի վեր զգալիորեն չի փոխվել: Բիզնեսներից շատերը դեռևս ունեն սահմանափակ ընկալում ՔՀԿ ոլորտի վերաբերյալ և ստեղծել են իրենց սեփական բարեգործական և սոցիալական նախաձեռնությունները՝ դրանով իսկ շրջանցելով ՔՀԿ-ների ներգրավումը:

Առավել մեծ թվով ՔՀԿ-ներ են սկսել հանրությանը ներկայացնել իրենց աշխատանքների արդյունքները և ազդեցությունը: Առավել մեծ թվով ՔՀԿ-ներ են սկսել կիրառել սոցիալական մեդիան՝ հատկապես Ֆեյսբուքը և Ինստագրամը, ինչպես նաև առցանց հեռարձակման և տվյալների վիզուալիզացման գործիքներ իրենց գործունեության վեաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացման նպատակով: Այնուամենայնիվ, ՔՀԿ-ների մեծ մասը դեռևս չունի սոցիալական մեդիայի կիրառության համակարգային մոտեցում:

Միայն սակավաթիվ և այն էլ համեմատաբար առավել խոշոր չափերով ՔՀԿ-ներ ունեն վարքագծի կանոնակարգեր կամ փորձում են իրենց գործելակերպում դրսևորել թափանցիկություն՝ տարեկան հաշվետվությունների կամ այլ համապատասխան տեղեկատվության հրապարակման միջոցով: Հիմնադրամները պարտավոր են հրապարակել տարեկան հաշվետվություններ պետական կայքերում, այնինչ հասարակական կազմակերպությունները պարտավոր են հաշվետվություններ հրապարակել միայն այն դեպքում, երբ ստանում են ֆինանսավորում հանրային աղբյուրներից: Հրապարակված հաշվետվությունները սովորաբար շատ ընդհանրական են և չեն պարունակում առավել մանրամասն տեղեկատվություն ՔՀԿ-ների գործառնությունների և ֆինանսավորման վերաբերյալ:

Ծանուցում. Այս զեկույցում ներկայացված են քննարկումների մասնակիցների և նախագծի փորձագետների կարծիքները, և պարտադիր չէ, որ դրանք արտացոլեն USAID-ի կամ FHI 360-ի տեսակետները: